Ձերդ Սրբություն, մեր մաղթանքն է, որ ամենակալն Աստված Ձեզ միշտ օգնական լինի Ձեր բարձր ծառայության մեջ եւ պարգեւի քաջառողջություն, խաղաղություն եւ գործոց հարանոր հաջողություններ: Թող Աստծո ամենակալ Աջը պահպանի Ձեզ հավիտյանս հավիտենից:

Առ Աստված սիրով

ԿԻՐԻԼ
ՄՈՍԿՎԱՅԻ ԵՒ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻՈՅ ՊԱՏՐԻԱՐՔ

ՇՆՈՐՀԱՎՈՐԱԳՐԵՐ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏԱՄՆԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի գահակալության տասնամյակի առիթով Նորին Սրբությանը շնորհավորական ուղերձ է հղել Հռոմի Սրբազան Քահանայապետ Բենեդիկտոս ԺՁ Պապը:

Ուղերձում ասվում է.

«Շնորհք ընդ ձեզ եւ խաղաղութիւն յԱստուծոյ ի Հօրէ, եւ ի Տեառնէ մերմէ Յիսուսէ Քրիստոսէ» (Գաղ. Ա 3):

Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոս Ձեր ընտրության եւ գահակալման տասնամյակի ուրախալի առիթով այսու Ձերդ Սրբությանն ենք փոխանցում մեր եղբայրական ամենաջերմ զգացումները:

Փառք ենք տալիս Աստծուն այն օրհնության համար, որ Նա տվել է Հայաստանյայց Առաքելական Եկեղեցուն՝ Ձերդ Սրբության ծառայության միջոցով: Մեզ հայտնի է նաեւ Ձեր անձնական նվիրումը Հայ Առաքելական եւ Կաթոլիկ Եկեղեցիների միջեւ երկխոսության, համագործակցության եւ բարեկամության հանդեպ, ինչը բազմիցս դրսեւորվել է մեր փոխադարձ հանդիպումների ընթացքում: Աղոթում ենք, որ մեր միջեւ հաստատված բարի հարաբերությունները շարունակեն աճել գալիք տարիներին:

Անցած դարավերջում Հայոց Եկեղեցու վերագտած ազատությունը ուրախություն պատճառեց համայն աշխարհի քրիստոնյաներին: Եկեղեցական կյանքը վերակառուցելու հսկայական աշխատանքն ընկավ Ձերդ Սրբության ուսերին: Նման կարճ ժամանակահատվածում ձեռքբերվածն իրոք նշանակալի է. նոր նախաձեռնություններ, երիտասարդների քրիստոնեական դաստիարակության,

եկեղեցականների պատրաստության, նոր համայնքների հաստատման, նոր եկեղեցիների եւ համայնքային կենտրոնների կառուցման, ինչպես նաեւ ազգի հասարակական եւ մշակութային կյանքում քրիստոնեական արժեքների հաստատման ուղղությամբ:

Ձերդ Սրբություն, մեր մաղթանքն է առ Ամենակարողն Աստված, որ Սուրբ Գրիգոր Լուսավորչի բարեխոսությամբ մենք կարողանանք էլ ավելի հաստատուն կերպով ձգտել միության՝ քրիստոնեական հավատի, հույսի եւ սիրո սրբազան կապերով: Այս նշանակալի առիթով մաղթում ենք, որ հաղթական Աստծո օրհնությունն իջնի Ձերդ Սրբության վրա: Թող Հայր Աստծո սերը պարուրի Ձեզ, Որդու իմաստությունը լուսավորի եւ Սուրբ Հոգու կրակը ներշնչի Ձերդ Սրբությանը:

Առ Տերն մեր Հիսուս Քրիստոս եղբայրական սիրով ու մաղթանոք՝

ԲԵՆԵԴԻԿՏՈՍ ԺԶ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ՀԱՆՁՆՎԵՑ ՌԴ ՆԱԽԱԳԱՀԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ

Նոյեմբերի 4-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ՀՀ-ում ՌԴ արտակարգ եւ լիազոր դեսպան Վյաչեսլավ Կովալենկոյին:

Հանդիպման ընթացքում մեծարգո դեսպանը ջերմորեն շնորհավորեց Վեհափառ Հայրապետին գահակալության տասնամյակի առիթով եւ Նորին Սրբությանը հանձնեց Ռուսաստանի Դաշնության նախագահ Դմիտրի Մեդվեդեւի շնորհավորական ուղերձը:

Ուղերձում մասնավորապես ասվում է. «Ռուսաստանում մեծ հարգանք են տածում Հայ Եկեղեցու հանդեպ, որը բազում հարյուրամյակներ շարունակ պահել է քրիստոնեական հավատը: Բարձր ենք գնահատում Ռուս Ուղղափառ եւ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցիների միջեւ ձեւավորված բարի հարաբերությունները: Նրանք միշտ հատուկ դեր են ունեցել եւ ունեն մեր երկրների միջեւ բարեկամության ու վստահության ամրապնդման գործում: Դրա տեսանելի վկայությունն է Մոսկվայում կառուցվող հայկական տաճարը եւ ռուս ուղղափառ եկեղեցին՝ Հայաստանի Հանրապետության տարածքում: Դրանում, անկասկած, կա նաեւ Ձեր անձնական ավանդը՝ իբրեւ հեղինակավոր կրոնական գործիչ, ով մեծ ուշադրություն է հատկացնում ռուս-հայկական հումանիտար կապերին:

Դուք նշանակալի ներդրում ունեք նաեւ միջկրոնական երկխոսության ամրապնդման գործում: Վստահ ենք, որ Ձեր ջանքերը ԱՊՀ Միջկրոնական խորհրդի շրջանակներում, որի համահիմնադիրն է Հայ Առաքելական Եկեղեցին, կնպաստեն խաղաղության եւ կայունության ապահովմանը Հարավային Կովկասում»: